



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 216

ք.Արտաշատ

„27„ 09 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի հուլիսի 19-ի «Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 814-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Էյյանորա Հովհաննիսյանի՝ բաժնի գլխավոր մասնագետ Վարդան Ուրֆայանի կողմից ելից փաստաթղթերի ժամկետի էական խախտումներով իրականացնելու մասին գրությունը.

1. Արարատի մարզպետարանում 2018թվականի սեպտեմբերի 27 -ից նշանակել ծառայողական քննություն՝ գրության հիմնավորվածությունը պարզելու, բաժնի լիազորությունների և պարտականությունների իրականացման ընթացքում թերացումների պատճառները հայտնաբերելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ Սուսաննա Խուդավերդյանին հանձնարարել՝ ծառայողական քննություն անցկացնել մինչև ս/թ հոկտեմբերի 10 ներառյալ և արդյունքների մասին համապատասխան եզրակացություն ներկայացնել: